

Հրատարակվում է **ԱՅԼԸՆՏՐԱՆՔ** Հետազոտական Կենտրոնի
գիտական խորհրդի որոշմամբ:
ՀՀ ԿԳՆ ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի է ատենախոսությունների հիմնական
արդյունքների և դրույթների հրատարակման համար:

ԱՅԼԸՆՏՐԱՆՔ

եռամսյա գիտական հանդես
տնտեսագիտություն, գործարարություն, կառավարում

Հունվար – Մարտ, 2020թ.

Խմբագրական խորհուրդ

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

դոկտոր, պրոֆեսոր

Խորհրդի նախագահ և

գլխավոր խմբագիր, ՀԱՅԱՍՏԱՆ

ԳՐԻՇԱ ՂԱՐԻՔՅԱՆ

դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀԱՅԱՍՏԱՆ

ՎԱՐԴԱՆ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

դոկտոր, պրոֆեսոր, ՀԱՅԱՍՏԱՆ

ՖՐԱՆՍԻՍ ԲԱՐՈՆ ՎԱՆ ԼՈՒՆ

դոկտոր, պրոֆեսոր, ԲԵԼԳԻԱ

ՄԵՐԻԼԻՆ ԹԵՅԼՈՐ

դոկտոր, պրոֆեսոր, ԱՄՆ

ՊԱՈԼՈ ԼԵՈՉԻ

դոկտոր, պրոֆեսոր, ԻՏԱԼԻԱ

ՍԵՐԳԵՅ ԿԱԼԵՆՋՅԱՆ

դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ

ԼԻԼԻԱՆ ՎԱՆ ՀՈՖ

դոկտոր, պրոֆեսոր, ԲԵԼԳԻԱ

ՇԱՈԱ ՅԱՆԳ

դոկտոր, պրոֆեսոր, ԱՄՆ

ԱՐՄԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

տնտեսագիտության դոկտոր, ՀԱՅԱՍՏԱՆ

ՋՈՆ ՌԻՈԼՇ

դոկտոր, պրոֆեսոր, ԹԱԻԼԱՆԴ

ԱՐՄԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

տնտեսագիտության դոկտոր, ՀԱՅԱՍՏԱՆ

Research Center **ALTERNATIVE**

ALTERNATIVE Quarterly Journal

October – December, 2019

Editorial Board:

Tatoul Manasserialian – Doctor of Sciences, Professor (Editor in chief), , ARMENIA

Grisha Gharibyan – Doctor of Sciences, Professor, ARMENIA

Vardan Bostanjyan – Doctor of Sciences, Professor, ARMENIA

Francis Baron Van Loon – Doctor of Sciences, Professor, BELGIUM

Marilyn Taylor – Doctor of Sciences, Professor, USA

Paolo Leoci – Doctor of Sciences, Professor, ITALY

Sergey Kalenchyan – Doctor of Sciences, Professor, RUSSIA

Liliane Van Hoof – Doctor of Sciences, Professor, BELGIUM

Xiaohua Yang – Doctor of Sciences, Professor, USA

Armen Safaryan – Doctor of Sciences, ARMENIA

John Walsh – Doctor of Sciences, Professor, THAILAND

Arman Martirosyan – Doctor of Science in Economics, ARMENIA

Исследовательский Центр **АЛЬТЕРНАТИВА**

АЛЬТЕРНАТИВА Квартальный Журнал

Октябрь – Декабрь, 2019

Редакционный Совет:

Татул Манасерян – доктор наук, профессор (Главный редактор, председателем совета), АРМЕНИЯ

Гриша Гарибян – доктор наук, профессор, АРМЕНИЯ

Вардан Бостанджян – доктор наук, профессор, АРМЕНИЯ

Франсис Барон Ван Лун – доктор наук, профессор, БЕЛЬГИЯ

Мерилин Тейлор – доктор наук, профессор, США

Паоло Леочи – доктор наук, профессор, ИТАЛИЯ

Сергей Каленчан – доктор наук, профессор, РОССИЯ

Лилиан Ван Хоф – доктор наук, профессор, БЕЛЬГИЯ

Шао Янг – доктор наук, профессор, США

Армен Сафарян – доктор наук, АРМЕНИЯ

Джон Уолш – доктор наук, профессор, ТАИЛАНД

Арман Мартиросян – доктор наук, АРМЕНИЯ

ԱՌՒԴԻՏԻ ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Գնել ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԵՊՀ ՏԿ ֆակուլտետի հեռակա հայցորդ

Բանալի բառեր. աուդիտ, որակի վերահսկողություն, Հանրային նշանակալի կազմակերպություն (ՀՆԿ), Հանրային վերահսկողության խորհուրդ (ՀՎԽ)

Այս հոդվածում հետազոտվել է Հայաստանի Հանրապետությունում աուդիտի որակի արտաքին վերահսկողության հիմնահարցերը: Աուդիտի որակի ապահովումը պահանջում է ժամանակակից մարտահրավերներին արդյունավետ արձագանքող և միջազգային արդի փորձին համահունչ գործիքակազմ, որի առանցքային հարցերից է աուդիտի որակի արտաքին վերահսկողություն իրավասու կառույցի մոդելը:

Այս նպատակով հոդվածում հետազոտվել է մինչև այժմ գործող արտաքին վերահսկողության համակարգի և այդ համակարգի վերաբերյալ 2020թ. - ից գործող օրենսդրական փոփոխությունների արդյունավետությունը՝ դրանք համադրելով միջազգային լավագույն փորձի հետ: Հետազոտության արդյունքներով առաջարկվել է ՀՀ-ում արտաքին վերահսկողական համակարգի իրավասու կառույցի արդյունավետ մոդել:

Աուդիտի որակի վերահսկողության կիրառված համակարգը ՀՀ-ում:

ՀՀ-ում աուդիտի որակի նկատմամբ վերահսկողությունը լիազորված է ՀՀ ֆինանսների նախարարությանը:²⁹⁶ Վերջինս, 2010թ. իր այդ լիազորությունը իրականացնելու նպատակով ստեղծեց Աուդիտորական գործունեության հսկողության տեսչություն, որը ՀՀ ֆինանսների նախարարության կառուցվածքային փոփոխությունների արդյունքում 2018թ.-ի գարնանը դադարեցրեց իր գործունեությունը²⁹⁷: Բացառությամբ տեսչության սկզբնական գործունեության շրջանի՝ 2011-2013թթ., աուդիտորական կազմակերպությունների նրկատմամբ տեսչության վերահսկողությունը հիմնականում սահմանափակվել է վարչարարական գործառույթների պահպանման հսկողությամբ: Մասնավոր-

²⁹⁶ ՀՀ Կառավարություն, ““Աուդիտորական գործունեության մասին” ՀՀ օրենքով նախատեսված ՀՀ Կառ. լիազորված պետական մարմնի մասին”, 31.03.2011 N 318-Ն որոշում

²⁹⁷ ՀՀ Կառավարություն, “ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի աուդիտորական գործունեության հսկողության տեսչություն ստեղծելու, տեսչության կանոնադրությունը և կառուցվածը հաստատելու մասին”, 04.03.2010թ. N 268-Ն որոշում

րապես, Ր. Ալեքսանյանի հետազոտությունը ցույց է տալիս, որ տեսչական գործունեությունը առավելապես ուղղված էր աուդիտորական կազմակերպությունների կողմից գրանցամատյանների կամ եռամսյա հաշվետվությունները լրացման ճշտության ստուգմանը, որը չի արտացոլում կամ վերահսկում իրականացված աուդիտի որակը²⁹⁸:

Աղյուսակ 1. Տեսչության կիրառած պատժամիջոցների բնույթը և քանակը, 2013-2016թթ. ժամանակահատվածի ընթացքում

Պատժամիջոց	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
Նախազգուշացում	3	13	1	5
Տուգանք	16	13	10	6
Կասեցում	3	4	0	1
Դադարեցում	2	0	0	0
Ընդամենը	24	30	11	12

ՀՀ-ում աուդիտի որակի արտաքին վերահսկողության մեկ այլ օրինակ էր 2013թ. Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի (ՀՀԱԱ) կողմից նախաձեռնած աուդիտի որակի կամավոր մոնիթորինգը, որն իրականացվեց Անգլիայից հրավիրված արտաքին փորձագետի միջոցով²⁹⁹: Աուդիտի արտաքին վերանայման աուդիտորական կազմակերպությունների կամավոր մասնակցության հիման վրա մշակված նախաձեռնությունը նորություն էր ՀՀ-ում: Մոնիթորինգը դրական արդյունքով հանձնեցին աուդիտորական միջազգային ցանցի անդամ մասնակից երեք աուդիտորական կազմակերպությունները, ինչպես նաև ցանցի անդամ չհանդիսացող մասնակիցներից չորսը: Մոնիթորինգը դրական արձագանք ունեցավ ՀՀ ֆինանսների նախարարության և աուդիտի ոլորտի տարբեր կառույցների կողմից, բայց դրան մասնակցեցին միայն սակավաթիվ աուդիտորական ընկերություններ և այն հետագա շարունակություն չունեցավ: Աուդիտորական գործունեությունը³⁰⁰ ՀՀ-ում մինչև 2019թ. ենթակա էր լիցենզավորման, որի համար աուդիտորական կազմակերպությունից պահանջվում է իր աշխատա-

²⁹⁸ Ալեքսանյան Ր., “Կազմակերպություններում արտաքին աուդիտի կարգավորման արդի հիմնախնդիրները”, 2017, ՀՊՏՀ, Երևան

²⁹⁹ Հայաստանի Հաշվապահների և Աուդիտորների Ասոցիացիա, “ՀՀԱԱ Աուդիտի Որակի Մոնիթորինգի արդյունքներ”, 20.11.2013թ., <<http://aaaa.am/am/shownews/138/>>

³⁰⁰ ՀՀ Կառավարություն, “ՀՀ-ում աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզավորման կարգը հաստատելու մասին”, 22.03.2012թ.-ի N346-Ն որոշում

կազմում նվազագույնը հինգ որակավորված աուդիտորների առկայություն, որոնցից երեքը՝ հիմնական աշխատակցի կարգավիճակով³⁰¹: Լիցենզավորման պահանջը համահունչ չէր միջազգային առաջատար փորձին և էական ազդեցություն չունեի աուդիտի որակի վրա: Այդ պատճառով, այս պահանջը 2019թ. դեկտեմբերին հանվեց:³⁰²

Աուդիտի որակի արտաքին վերահսկողության կարևորությունը: Գ. Հահնեի կողմից կատարված հետազոտությունը հիմնավորում է, որ աուդիտորական կազմակերպությունների կողմից աուդիտի որակի ներքին համակարգի առկայության և նրա շարունակական պահպանման նկատմամբ արտաքին լիազոր մարմնի կողմից արդյունավետ վերահսկողությունը անհրաժեշտ է՝ ապահովելու, որ աուդիտն իրականացվի համաձայն Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ-ներ) և աուդիտորի եզրակացությունը համապատասխանի աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հանգամանքներին:³⁰³

2019թ. դեկտեմբերի 4-ին ընդունված “Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին” ՀՀ նոր օրենքով, աուդիտի որակի արտաքին վերահսկողությունը նախատեսվում է իրականացնել օրենքին համապատասխան հավատարմագրված մասնագիտական կառույցների կողմից: Իսկ մասնագիտացված կառույցների կողմից իրեն վերապահված գործառույթների պատշաճ իրականացման նկատմամբ հսկողությունը և աուդիտի ոլորտի ընդհանուր վերահսկողությունը նախատեսվում է իրականացնել տվյալ օրենքների պահանջների համապատասխան ձևավորվելիք “Հանրային վերահսկողության խորհրդի” (ՀՎԽ) կողմից, որը լինելու է ՀՀ ֆինանսների նախարարությանը կից հասարակական հիմունքով գործող մարմին: Նշված օրենքով նախատեսվում է, որ հավատարմագրումը և ՀՎԽ-ի ստեղծումը կիրականացվեն մինչև 2020թ. ավարտը, սակայն 2020թ. մարտի դրությամբ դեռևս որևէ մասնագիտական կառույց ՀՀ-ում հավատարմագրված չէ, իսկ ՀՎԽ-ի

³⁰¹ ՀՀ Կառավարություն, “Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիայի պայման ապահովող աուդիտորների մասով աուդիտ իրականացնողներին ներ-կայացված պահանջների կիրառման կարգը հաստատելու մասին”, 13.06.2013 778-Ն որոշում

³⁰² ՀՀ Ազգային Ժողով, «Ամփոփաթեթ», 2019, www.parliament.am

³⁰³ Hahne G., “The effects of external quality control on quality in auditing companies”, 2015, University of Latvia, Riga

ստեղծման վերաբերյալ դեռևս իրավական ակտ չի հրապարակվել: Մասնագիտական կառույցների կողմից աուդիտի որակի ապահովման նպատակով նշված օրենքով նախատեսվում է, որ հավատարմագրման պահանջները ներառելու են մասնագիտական կառույցի կողմից աուդիտի որակի արտաքին վերանայման արդյունավետ համակարգի մշակման, ներդրման և պահպանման պարտավորության ստանձնում: Նշված համակարգը պետք է ապահովի տվյալ հավատարմագրված կառույցին անդամագրված աուդիտորական ընկերությունների նկատմամբ որակի հսկողության գործառույթի իրականացում ոչ պակաս, քան երեք տարին մեկ պարբերականությամբ՝ ստուգման արդյունքների հրապարակմամբ³⁰⁴: Այս օրենքով, ՀՀ-ում գործող բոլոր աուդիտորական կազմակերպություններից պահանջվում է պարտադիր անդամագրում հավատարմագրված մասնագիտացված կառույցներից որևէ մեկում՝ դրանցում ներդնելով կառույցին անդամագրված աուդիտորական կազմակերպությունների ռեսուրս՝ ԵԱՏՄ տարածքում աուդիտորական գործունեության կանոնակարգման մասին համաձայնագրին համահունչ³⁰⁵:

Մասնագիտացված կառույցների կողմից աուդիտի որակի վերահսկողության իրականացման, ինչպես նաև մասնագիտացված կառույցի այլ համապատասխան ծախսերը հոգալու նպատակով նշված օրենքով սահմանվում է, որ հավատարմագրված մասնագիտացված կառույցները կարող են անդամակցող ընկերություններից գանձել տարեկան անդամավճար, հասույթից ու պարտադիր աուդիտի քանակից կախված գումար:

Աուդիտի որակի արդարքին վերահսկողության միջազգային փորձը:


Համաձայն Եվրոպական Միության (ԵՄ) Աուդիտի դիրեկտիվի. “Որակի գնահատման համակարգը պետք է կազմակերպվի այնպես, որ այն անկախ լինի գնահատվող աուդիտորներից և ենթակա լինի հանրային վերահսկողության”³⁰⁶: Ըստ այդ դիրեկտիվի. “ՀՎԽ-ն է աուդիտի որակի վերահսկողության հիմնական պատասխանատուն:” Հաշվի առնելով աուդիտի արդյունավետ վերահսկողության համար պահանջվող ֆինանսական և փորձագիտական կապիտալի սղությունը, զարգացած երկրների մեծ մասում կիրառ-

³⁰⁴ “Աուդիտորական գործունեության մասին” ՀՀ օրենք, ընդունվել է 04.12.2019թ.

³⁰⁵ Евразийская эконемическая комисссия, “О проекте соглашения об осуществлении аудиторской деятельности в рамках Евразийского экономического союза”, 20.01.2019, М.

³⁰⁶ The European Parliament and of the Council, “On statutory audits of annual accounts and consolidated accounts”, Directive 2006/43/EC at 17.05.2006

վում է «երկշերտ» վերահսկողության համակարգ, աուդիտի որակի ապահովման արդյունավետ համակարգը պետական մակարդակով ներդնելով Հանրային նշանակալի կազմակերպությունների (ՀՆԿ-ներ) (մեր կողմից թարգմանվել է Public Interest Entities (PIEs) տերմինից) աուդիտի նկատմամբ:³⁰⁷ Որով, ՀՆԿ-ների աուդիտի որակի արտաքին վերահսկողությունը լիազորվում է պետական կամ նման այլ, իսկ մնացած աուդիտորների որակի արտաքին վերահսկողությունը՝ մասնագիտական կառույցներին:



Գծապատկեր 1. Աուդիտի որակի վերահսկողության երկշերտ համակարգ

Աուդիտի որակի ապահովման նպատակով միջազգային մակարդակով գործող ամենաճանաչված կազմակերպությունը՝ Աուդիտի անկախ կարգավորողների միջազգային ֆորումը (ԱԱԿՄՖ), հրապարակել է աուդիտի որակի արդյունավետ վերահսկողության որոշ հիմնարար սկզբունքներ, որոնցից Ցրդ սկզբունքը պահանջում է, որ աուդիտի ոլորտի կարգավորողը նվազագույնը պետք է իրականացնի ՀՆԿ-ների աուդիտ իրականացնող աուդիտորների պարբերական ստուգումներ, որպեսզի հավաստիանա, որ նրանք ապահովում են մասնագիտական ստանդարտները, անկախության պահանջները և այլ իրավական կարգավորումները:³⁰⁸ Նշված փաստաթղթում նաև

³⁰⁷ The European Parliament and the Council, “On specific requirements regarding statutory audit of public-interest entities”, Regulation (EU) No 537/2014 at 16 April 2014

³⁰⁸ International Forum of Independent Audit Regulators (IFIAR), “IFIAR Reference Guide: Establishing independent public oversight systems of auditors/ audit firms”, March 2016, <<https://www.ifiar.org/?wpdmdl=2110>>

ներկայացված է զարգացած երկրներում աուդիտի որակի նկատմամբ պատասխանատու կառույցները և նրանց կարգավիճակը (2016թ. -ի դրությամբ), որը ցույց է տալիս, որ զարգացած երկրներում ՀՆԿ-ների աուդիտի որակի ապահովման համար պատասխանատու մարմիններից ոչ մեկը չի հանդիսանում մասնագիտական կառույց:

Աղյուսակ 2. ՀՎԽ-ների կարգավիճակը զարգացած երկրներում

Կարգավիճակ	Երկիր և ՀՎԽ-ի անվանումը		
Անկախ կառույց	Միացյալ Թագավորություն – Ֆինանսական Կարգավորող Խորհուրդ (FRC)	ԱՄՆ – Հանրային Ոլորտի Աուդիտի Հաշվապահության Վերահսկողության Խորհուրդ (PSAOB)	Ֆրանսիա – Աուդիտորների Բարձրագույն Խորհուրդ (H3C)
Արժեթղթ/երի շուկային կից կառույց	Հոլանդիա – Ֆինանսական Շուկայի Կարգավորիչ (AFM)	Ավստրալիա – Ավստրալիայի Արժեթղթերի և Ներդրումների Հանձնախումբ(ASIC)	Մալազիա – Աուդիտի Վերահսկողության Խորհուրդ (AOB)
Կառավարության մաս	Ավստրիա – Աուդիտի Վերահսկողության Մարմին (ASA)	Ճապոնիա – Ֆինանսական Ծառայությունների Գործակալություն (JFSA)	Հունգարիա – Ազգային Էկոնոմիկայի Նախարարություն (APOA)

Մեր հարևան երկիր Վրաստանում նույնպես ՀՆԿ-ների աուդիտ իրականացնող աուդիտորական կազմակերպությունների արտաքին վերահսկողությունը իրականացվում է ՀՎԽ-ին համարժեք կառույցի՝ «Հաշվապահության, Հաշվետվողականության և Աուդիտի Վերահսկողության» կողմից:³⁰⁹

Համաձայն ԱԱԿՄՖ-ի նշված փաստաթղթի, աուդիտի որակի վերահսկող կառույցի անկախության համար նվազագույնը անհրաժեշտ է, որ նրա անդամների մեծամասնությունը չլինեն գործող աուդիտորներ, իսկ ֆինանսավորումը չպետք է նշանակալի ազդեցություն ունենա աուդիտորական ընկերություններից: Մինչդեռ, մասնագիտական կառույցի կառավարող անդամները հիմնականում ՀՀ-ում գործող աուդիտորական կազմակերպու-

³⁰⁹ Service for Accounting, Reporting and Auditing Supervision, Republic of Georgia, <https://www.saras.gov.ge/en>

թյունների ղեկավարներ են³¹⁰: Հետևաբար, կասկածի տակ չդնելով մասնագիտացված կառույցների ղեկավարման խորհրդում կամ այլ մասնագիտական մարմինների ղեկավար կազմում ընդգրկված աուդիտորների անաչառությունն ու ազնվությունը, արտաքին դիտարկողի տեսանկյունից մասնագիտացված կառույցը չի կարող դիտվել անկախ իրենց կողմից ստուգվող աուդիտորական կազմակերպություններից:

Հավատարմագրվող մասնագիտացված կառույցների ֆինանսական բյուջեի զգալի մասը նախատեսվում է ձևավորել իրենց անդամակցող աուդիտորական կազմակերպությունների անդամավճարներից, որպես կորպորատիվ անդամներ, ինչպես նաև այդ կազմակերպության ղեկավարների ու այլ աուդիտորների կողմից անդամավճարներից, որպես անհատ անդամներ: Այս հանգամանքը նույնպես նշանակալի անկախության վտանգներ է ստեղծում մասնագիտացված կառույցի և իր կորպորատիվ կամ անհատ աուդիտոր անդամների միջև:

Աուդիտի որակի արտաքին վերանայման փորձագետի ընտրություն:

Քանի որ աուդիտի որակի արտաքին վերանայման բուն գործառույթը և գնահատումը իրականացվում է համապատասխան փորձ, անկախության և մասնագիտական այլ կարևոր որակներ ունեցող փորձագետների կողմից, ապա փորձագետի ճիշտ ընտրությունը կարևոր է աուդիտի որակի արդյունավետ վերահսկողության նպատակով:

ՀՀ-ում աուդիտորական հանրությունը փոքրաթիվ է, հետևաբար գործնականում իրատեսական չէ այդ հանրությունից որևէ աուդիտորի որպես փորձագետ ներգրավումը, որը չառաջացնի փորձագետի օբյեկտիվության վերաբերյալ կասկածներ ու բողոքարկումներ՝ անկախ այդ փորձագետի օբյեկտիվության բարձր անձնական հատկանիշների:

ՀՆԿ-ների աուդիտ իրականացնող աուդիտորական կազմակերպության արտաքին որակի վերահսկողության ժամանակահատվածը կազմում է մոտ մեկ շաբաթ: Եթե կիրառվի աուդիտորների կարճ-ցանկ, ապա յուրաքանչյուր տարի ՀՆԿ-ի կողմից անհրաժեշտ կլինի իրականացնել երեք աուդիտորական ընկերության որակի վերահսկողություն, որի համար արտերկրից

³¹⁰ Հայաստանի Հանրապետության Աուդիտորների Ասոցիացիա, “Ձևավորվել է ՀՀԱԱ Խորհուրդ”, 2018, <<http://aaaa.am/>>

համապատասխան փորձագետի գծով տարեկան ծախսը կկազմի մոտ չորս միլիոն դրամ: Նշված գումարը իրատեսական է ներառել պետական բյուջով ֆինանսավորման մեջ, այլ ոչ թե գանձել աուդիտորական ընկերություններից, որպեսզի նրանցից ֆինանսական կախվածություն չառաջանա, ինչպես նշված է ԱԱԿՄՖ-ի որակի արդյունավետ վերահսկողության սկզբունքներում:

Աղյուսակ 3. ՀՎԽ-ի կողմից ՀՆԿ-ների աուդիտի որակի վերահսկողության իրականացման տարեկան նախահաշիվ.

Ծախսային հոդված	Հազար դրամ	Նշումներ
Փորձագետ – օտարերկրյա	2,000	3 աուդիտորական ընկերություն, 1-ական շաբաթ, գումարած մեկ շաբաթ հաշվետվություն – ընդամենը՝ 20 աշխատանքային օր, օրական՝ 100 հազար դրամ վճար
Փորձագետի ճանապարհա-ծախս	1,900	30 օրվա գիշերակաց՝ օրը 30 հազար դրամ, 30 օրվա օրապահիկ՝ օրը 25 հազար դրամ, ճանապարհածախս՝ 250 հազար դրամ
Ընդամենը	3,900	

Հոդվածում ներկայացված հետազոտությունները փաստում են, որ մինչև այժմ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որին լիազորված էր աուդիտի որակի վերահսկողության իրավասությամբ, հիմնականում չի ապահովել աուդիտի որակի բավարար վերահսկողություն, սակայն այդ վերահսկողության փոխանցումը հավատարմագրված մասնագիտացված կառույցներին, որը սահմանված 2019թ. դեկտեմբերի 4-ին ընդունված “Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին” ՀՀ նոր օրենքով, անարդյունավետ փոփոխություն է, հաշվի առնելով մասնագիտացված կառույցների և աուդիտորական կազմակերպությունների միջև առկա “շահերի-բախումը”:

Համաձայն, ներկայացված միջազգային լավագույն փորձի և ԱԱԿՄՖ-ի աուդիտի որակի վերահսկողության հիմնարար սկզբունքների, ՀՀ-ում պետք է կիրառել վերահսկողության «երկշերտ» համակարգ. ՀՆԿ-ների աուդիտի որակի արտաքին վերահսկողության համակարգի իրականացման գործառույթը վերապահել ձևավորվելիք ՀՎԽ-ին, որի կազմում չեն կարող ներգրավված լինել աուդիտորական կազմակերպություններից որևէ ներկայացու-

ցիչ, իսկ մյուս աուդիտորական կազմակերպությունների աուդիտի որակի վերահսկողությունը՝ հավատարմագրված մասնագիտական կառույցներին:

Աուդիտի որակի վերահսկողության արդյունավետ իրականացման նըպատակով ՀՎԽ-ն կարող է ներգրավել արտերկրից հրավիրված փորձագետի, որի գծով նախատեսվող տարեկան ծախսը կկազմի մոտ չորս միլիոն դրամ, որի ֆինանսավորումը առաջարկվում է իրականացնել պետական բյուջեի ֆինանսավորման միջոցով՝ աուդիտորական կազմակերպություններից վերահսկող կառույցի անկախության ապահովման նպատակով:

ՀՀ-ում աուդիտի որակի արդյունավետ վերահսկողությունը բարելավող համակարգի ներդրումը կարևոր գործառույթ է, որը պահանջում է ինստիտուցիոնալ, իրավական և այլ միջոցառումների արդի գործիքակազմ: Այս հոդվածում հետազոտությունների հիման վրա առաջարկվել են վերահսկող իրավասու կառույցի վերաբերյալ արդյունավետ մոտեցումներ, իսկ աուդիտի որակի ապահովման ամբողջական համակարգի վերլուծությունը չափազանց ծավալուն է և կներկայացվի այլ հոդվածներում:

Գնել ԽԱՉԱՏՐՅԱՆ

Աուդիտի որակի վերահսկողության հիմնահարցերը ՀՀ-ում

Բանայի բառեր. Աուդիտ, որակի վերահսկողություն, Հանրային նշանակալի կազմակերպություն (ՀՆԿ), Հանրային վերահսկողության խորհուրդ (ՀՎԽ)

Հոդվածում հետազոտվել է ՀՀ-ում աուդիտի որակի ապահովման նպատակով արտաքին վերահսկողության հիմնահարցերը: Ներկայացված վերլուծությունները հիմնավորում են, որ աուդիտի որակի արտաքին վերահսկողության փոխանցումը հավատարմագրված մասնագիտացված կառույցներին, որը սահմանված 2019թ. դեկտեմբերի 4-ին ընդունված “Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին” ՀՀ նոր օրենքով, անարդյունավետ փոփոխություն է, հաշվի առնելով մասնագիտացված կառույցների և աուդիտորական կազմակերպությունների միջև առկա “շահերի-բախումը”: Հոդվածում ուսումնասիրվել է միջազգային լավագույն փորձը և ԱԱԿՄՖ-ի աուդիտի որակի վերահսկողության հիմնարար սկզբունքները:

Գնել ԽԱՇԱՏՐՅԱՆ

Аудит вопросов контроля качества в Республике Армения

Ключевые слова: Аудит, контроль качества, общественные значимые организации (ОЗО), общественный надзорный совет (ОНС)

В данной статье рассматриваются вопросы внешнего контроля качества аудита в Республике Армения. Представленное исследование обосновывает, что передача внешнего контроля качества аудита аккредитованным профессиональным ассоциациям, как это определено новым Законом РА «О регулировании бухгалтерского учета и аудита и общественном надзоре», принятом 4 декабря 2019 года, является неэффективным изменением, учитывая «конфликт интересов» между профессиональными ассоциациями и аудиторскими фирмами. Исходя из передовой международной практики, исследованной в этой статье, и основополагающих принципов обеспечения качества аудита Международного форума независимых регуляторов аудита (МФНРА), было рекомендовано ввести «двухслойную» систему контроля в Армении: делегировать ОНС-у осуществления внешнего контроля качества ОЗО, в состав которого не могут входить представители аудиторских фирм; а контроль качества аудита других аудиторских фирм делегировать профессиональным ассоциациям. Также было рекомендовано привлечь соответствующего эксперта из-за рубежа для проверки качества аудита, чтобы избежать риска независимости.

Gnel KHACHATRYAN

Audit quality control issues in the Republic of Armenia

Key words: Audit, quality control, Public Interest Entities (PIEs), Public Oversight Board (POB)

This article examines the audit quality external control issues in the Republic of Armenia. The presented research justifies that the transfer of audit quality external control to accredited professional associations, as defined by the new RA Law “On Accounting and Auditing Regulation and Public Oversight” adopted on December 4, 2019, is an ineffective change given the “conflict of interest” between the professional associations and the audit firms. Based on the international best practice researched in this article and the fundamental principles of the audit quality assurance of the International Forum of Independent Audit Regulators (IFIAR), it has been recommended to introduce “two-layer” control system: the authority of implementing the external quality control of the PIEs in Armenia delegate to the POB, which board shall not have any representative of audit firms; while the audit quality control of other audit firms to delegate to the professional associations. Also recommended to engage a relevant expert from abroad for the audit quality review to avoid the independence risk.